

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է

Ճանաչված արևելագետ-իրանագետ, մանկավարժ, արցախյան շարժման առաջամարտիկ, հասարակական գործիչ պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը 80 տարեկան է: Այդ պատկառելի հոբելյանը լավ առիթ է մեկ անգամ ևս իմաստավորելու և արժևորելու նրա դերն ու նշանակությունը մեր երկրի գիտական ու հասարակական կյանքում:

Անուրանալի է պրոֆ. Մելիքյանի ավանդը Հայաստանում իրանագիտության զարգացման գործում: Նրա բազմաթիվ արժեքավոր աշխատությունները կարևոր ներդրում են բարեկամ պարսիկ ժողովրդի հարուստ հոգևոր ժառանգության ավելի խորն ուսումնասիրման գործում: Հմուտ արևելագետ-իրանագետի տասնամյակների նպատակալաց հետազոտական աշխատանքով է պայմանավորված նրա բարձր գիտական հեղինակությունը՝ ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Գուրգեն Մելիքյանը պատկանում է այն գիտնականների թվին, որոնք չեն սահմանափակվում միայն գիտական գործունեությամբ: Նա նաև Ուսուցիչ է՝ այդ հասկացողության ամենաբարձր, ամենավեհ իմաստով. չէ՞ որ օժտված է երիտասարդներին ոչ միայն կրթելու, նրանց գիտելիքներ հաղորդելու, այլ նաև իր օրինակով դաստիարակելու, մարդկային կյանքի ամենաեական ճշմարտություններին հաղորդակից դարձնելու՝ քչերին տրվող հատկությամբ: Պատահական չէ, որ տասնամյակներ շարունակ Արևելագիտության ֆակուլտետի ուսանողների բազմաթիվ սերունդներ ձգտում են հնարավորինս ավելի մոտիկից շփվել Գուրգեն Մելիքյանի հետ, լինել նրա կողքին և զգալ նրա հոգատար վերաբերմունքը՝ հաղորդակից լինելով նրա մասնագիտական ու մարդկային իմաստությամբ:

Պրոֆեսոր Մելիքյանի հմուտ ղեկավարության ներքո ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետը, հենվելով հայ արևելագիտության լավագույն ավանդույթների վրա, դարձավ արևելա-

գետ-մասնագետների պատրաստման և գիտահետազոտական աշխատանքի կարևորագույն կենտրոն: Ֆակուլտետի շրջանավարտներն այսօր հաջողությամբ աշխատում են և՛ արևելագիտության, և՛ մարդկային գործունեության այլ ոլորտներում, ազնվորեն և նվիրումով ծառայելով Հայրենիքին՝ այնպես, ինչպես իրենց իր օրինակով ուսանել է սիրելի Ուսուցիչը՝ պարոն Մելիքյանը:

Մեր ժողովրդի նորագույն պատմության մեջ շրջադարձային եղավ Ղարաբաղյան շարժումը, որն ազդարարեց Հայոց Ոգովերածնունդը և անկախ պետականություն կերտելու համայն հայության անկոտրուն կամքը: Այդ շարժման առաջամարտիկներից էր Գուրգեն Մելիքյանը: Արդեն իսկ շարժման առաջին օրերից նա նույնացրեց իրեն մեր ժողովրդի այդ կենաց մահու պայքարի հետ, հանուն հաղթանակի ներդնելով իր հարուստ հոգեկերտվածքի ողջ ներուժը: Այսօր էլ պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը անշեղորեն շարունակում է իր նվիրական գործունեությունը, օգնելով արցախահայությանը:

Մաղթում եմ Ձեզ, շատ սիրելի և հարգելի պարոն Մելիքյան, քաջ առողջություն, որ դուք նույն երիտասարդական ավյունով շարունակեք Ձեր հայրենանվեր գործունեությունը և ամենօրյա ծառայությունը հայոց պետականությանը և գիտությանը:

***Ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյան
ՀՀ ԳԱԱ Արևելագիտական ինստիտուտի տնօրեն***